Համայնքային բյուջե-2022թ. 1-ին կիսամյակ

Սևանի համայնքապետարանում ամփոփվել են Սևան միավորված համայնքի 2022թ.-ի 1-ին կիսամյակի արդյունքները:

Միավորված համայնքի 2022թ. 1-ին կիսամյակի բյուջեի եկամուտների /վարչական և ֆոնդային բյուջեները միասին/ պլանը կատարվել է 84.1%-ով: 917.0 մլն. դրամ պլանային եկամուտների դիմաց հավաքագրած և պետական բյուջեից հատկացված դոտացիան կազմել է 771.6 մլն. դրամ, թերակատարումը կազմել է 145.4 մլն. դրամ, այդ թվում՝ վարչական բյուջեի գծով առկա է 107.1 մլն. դրամ եկամուտների թերակատարում, ֆոնդային բյուջեի գծով թերակատարումը կազմել է 92.6 մլն. դրամ է:

2022թ. 1-ին կիսամյակի բյուջեի վարչական մասը կատարվել 86.1 %-ով / պլան՝ 772.0 մլն. դրամ, փաստացի՝ 664.9 մլն. դրամ /: Վարչական բյուջեում սեփական եկամուտները կատարվել են 61 9%-ով / պլան՝ 282.9 մլն. դրամ, փաստացի՝ 175.1մլն. դրամ /: Թերակատարումը կազմել է 107.8 մլն դրամ կամ 38.1 %: Հարկերի և տուրքերի պլան կատարվել է 57.1 %-ով: Հարկերի և տուրքերի մեջ գերակատարվել է միայն գույքահարկ շենք-շինությունների գծով՝ 1.0 մլն. դրամի չափով, իսկ անշարժ գույքի հարկի և տեղական և պետական տուրքերի, տրանսպորտի գույքահարկի գծով առկա են պլանների թերակատարումներ: Ոչ հարկային եկամուտների մեջ գերակատարվել է ինքնակամ կառույցների օրինականացման վճարների և տեղական վճարների եկամտատեսակները, իսկ ուսումնական, ծնողական վճարները և մնացած ոչ հարկային եկամուտների մասով առկա է թերակատարում:

Հարկ է նշել, ր 2021 թ. հունվարի 1-իվ գործողության մեջ է դրվել անշարժ գույքի հարկը, որը միավորել է նախկին գույքահարկը և հողի հարկը, ինչպես նաև առանձնացվել է փոխադրամիջոցների գույքահարկը ֆիզիկական և իրավաբանական անձանց գծով: Չնայած առկա բազմաթիվ անճշտություններին՝ ներդրված նոր ծրագրերն աշխատում են անխափան, զուգահեռ աշխատում են նաև գույքահարկերի նախկին ծրագրերը:

Համայնքի բյուջեի 1-ին կիսամյակի թերակատարման պատճառը օբյեկտիվ չվճարումներն են՝ կապված առկա ժամանակաշրջանի հետ:

Համայնքի ֆոնդային բյուջեի եկամուտները կատարվել են 56.2 %-ով / ճշտված պլան՝ 211.5 մլն. դրամ, փաստացի՝ 118.9 մլն. դրամ /: 2022թ-ի առաջին կիսամյակում ստացվել և ծախսվել է 2021թ. համար նախատեսված 63.3 մլն. դրամի սուբվենցիան:

Համայնքի 2022թ-ի 1-ին կիսամյակի եկամուտների կատարման ամփոփ ցուցանիշները տես հավելված 1-ում:

Հիմք ընդունելով եկամուտների կատարման ցուցանիշները՝ համապատասխանաբար կատարվել են համայնքի 2022թ. 1-ին կիսամյակի բյուջեի ծախսերը: Համայնքի բյուջեի ծախսերը կատարվել են 86.8 %-ով: 829.6 մլն. դրամ պլանային ծախսերի դիմաց փաստացի կատարվել է 720.3մլն. դրամի ծախս, կամ թերակատարումը կազմել է 109.3 մլն. դրամ, /13.1 % / :

Վարչական բյուջեի ծախսերը կատարվել են 84.7%-ով (պլան՝ 642.9 մլն. դրամ, փաստացի 544.6 մլն. դրամ), թերակատարումը կազմել է 98.3 մլն. դրամ: Վարչական բյուջեի փաստացի ծախսերի 44.6%-ը կամ 242.1 մլն. դրամ կազմել են կրթության և մշակույթի ծախսերը, 183.2 մլն.դրամ՝ ընդհանուր բնույթի համայնքային ծառայությունները՝ 92.6մլն. դրամ՝ սանիտարական մաքրման ծախսեր:

Ըստ առանձին ոլորտների՝ համայնքի 2022թ. 1-ին կիսամյակի բյուջեի ծախսերը կատարվել են հետևյալ չափերով՝ կրթության ծախսերը՝ 99.6 % , մշակույթի ծախսերը՝ 87.3 %:

2022թ. համայնքի բյուջեի ֆոնդային մասի ծախսերը կատարվել են 94.1 %-ով (պլան՝ 199.7մլն. դրամ, փաստացի ծախս՝ 188.0 մլն. դրամ): Համայնքի 2022թ. ֆոնդային բյուջեից վճարվել է 150.7 մլն. դրամ ասֆալտապատման, փոսային հիմնանորոգման պարտքեր, այդ թվում՝ նաև 2021թ.-ի պարտքերը. 63.3 մլն. դրամը վճարվել է 2021թ-ի սուբվենցիայի հաշվին: Համայնքի 2022թ-ի 1-ին կիսամյակի ծախսերի կատարման ամփոփ ցուցանիշները տես հավելված 2-ում:

2022թ. հունվարի 1-ի դրությամբ պարտքերը կազմել են 34.7մլն. դրամ:

Բյուջետային գործառնություններից դուրս պարտքեր չկան: 2022թ-ի առաջին կիսամյակում ընթացքում մարվել է 31.1 մլն. դրամ պարտք, այդ թվում՝ 25.1մլն. դրամ ճանապարհների հիմնանորոգման աշխատանքների մասով 2016թ-ից տեղափոխված պարտքեր:

Սևան համայնքի միավորման արդյունքում գյուղական բնակավայրերից համայնք է տեղափոխվել ընդհանուր 91.1 մլն. դրամ կապիտալ ծրագրերի գծով պարտք: Մարվել է 82.8 մլն. դրամը, որից 63.2 մլն. դրամը՝ ստացված սուբվենցիայի հաշվին, 19.6 մլն. դրամը՝ համայնքի հաշվին:

Ընթացիկ բնույթի տեղափոխված բոլոր պարտքերը, այդ թվում՝ աշխատավարձի գծով, ամբողջությամբ մարվել են: